ՄԱՐԻԱՄ ՍՆԴՈՅԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Քիմիական զենքի կիրառման արգելումը միջազգային իրավունքում յուրահատուկ ուշադրության արժանացավ 20-րդ դարից սկսած, երբ այն հանդիսացավ զանգվածային ոչնչացման աղբյուր: Իր բացասական հետևանքները այնքան էր ընդլայնել ռազմական ընդհարումների ժամանակ, որ այն դարձավ քննարկման առարկա միջազգային մակարդակով: Սկզբում արգելվեց պատերազմի ժամանակ կիրառել խեղդող, թունավորող և այլ գազեր, մանրէաբանական միջոցներ, հետո արգելվեց քիմիական զենքը տեղադրել ջրերում, այնուհետև արգելվեց մանրէաբանական և տոկսիկ զենքերի պաշարների մշակումը, արտադրությունը, կուտակումը: Բայց և այնպես 20-րդ 90-ականներին ևս անհրաժեշտություն առաջացավ անդրադառնալ քիմիական զենքին և այս անգամ՝ բավականին մանրամասնորեն:

Չնայած որ 1907թ. արդեն անդրադարձ էր եղել թունավոր նյութերի արգելմանը պատերազմի ժամանակ, բայց համարում ենք, որ առաջին անգամ քիմիական զենքի արգելքին համընհանուր, պետական մակարդակով ուղիղ լուծում տրվեց 1925թ., երբ արգելվեց պատերազմի ժամանակ կիրառել խեղդող, թունավոր և նմանատիպ գազեր և մանրէաբանական միջոցներ: Շատ կարևոր դրույթ ևս սահմանվեց, որ դարձավ հիմք ապագա կոնվենցիաների համար. դա նպատակն էր, որի համար սահմանեց այս արձանագրությունը: Քիմիական միջոցների արգելումը դատապարտված էր քաղաքակիրթ աշխարհի կողմից, ուստի անհրաժեշտ էր այն վավերացնել միջազգային մակարդակով, արգելումը ընդունված ու պարտադիր է միջազգային իրավունքի համար ինչպես նաև ազգերի խղճի ու փորձի համար[1]: Թերևս այս արձանագրության սխալն այն էր, որ կոնկրետ չսահմանեց, թէ որտեղ պետք է այն տարածվեր, ինչ չափերով չպետք է այն կիրառվեր և որ դեպքերում էր այն համարվում թույլատրելի: Այս խնդիրներին ավելի մանրամասնորեն անդրադարձան հետագա միջազգային ակտերը:

1971թ. փետրվարի 11-ի պայմանագիրը «Ծովերի կամ օվկիանոսների հատակին և դրանց ընդերքում ատոմային կամ այլ տեսակի զանգվածային ոչնչացման զենքերի տեղադրման արգելման մասին», կարգավորում է այս

[1] Արձանագրություն «Խեղդող, թունավոր և այլ նմանատիպ գազերի և մանրէաբանական միջոցների օգտագործման արգելումը պատերազմի ժամանակ», 17 հուլիս, 1925 թ., ժն՝:

հարցը: Միացյալ Ազգերը իրենց աշխատանքը տանում են այն ուղղությամբ, որ օվկիանոսները և ծովերը օգտագործվեն և հետազոտվեն միայն խաղաղ նկատառումներով, և գործունեությունն ուղղված լինի միայն խաղաղությանը բոլոր պետությունների համար[2]: Արգելվում է օվկիանոսների կամ ծովերի հատակին կամ դրանց ընդերքում տեղադրել ցանկացած տեսակի զանգվածային ոչնչացման զենք: Արգելվում է նաև որևիցե կառույց, որը կնախատեսի դրանց պահպանման, օգտագործման կամ էլ փորձարկման համար[3]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ իրավական այս նորմը չի տարածվում ծովային հատակի գոտուց դուրս, ինչպես նաև չի տարածվում ափամերձ պետությունների վրա անգամ այն ծովային ընդերքներում, որը կողմ չհանդիսացող պետության իրավական կարգավորմանն է ենթարկվում: Գոտի ասելով՝ հասկանում ենք ափից 12 մղոն հեռավորությունը: Ծովերի և օվկիանոսների ընդերքում քիմիական զենքի տեղադրման, օգտագործման հետ կապված ցանկացած հարցերով պետությունները կարող են հավաքվել, կատարել ուսումնասիրություններ, իսկ որևիցե կասկածի դեպքում դիմել համապատասխան պետությանը, խորհրդակցել միմյանց հետ, համագործակցել կամ դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ աջակցելու իրեն: Իսկ եթե բավարար չլինի ՄԱԿ-ի օգնությունը նրանք կարող են իրենք անցկացնել հետազոտություններ և ուսումնասիրություններ[4] Ընդգծենք նաև, որ ոչ միայն իրենք պետությունները չպետք է տեղադրեն քիմիական զենք, այլ նաև չպետք է ցույց տան որևէ օգնություն այլ երկրներին տեղադրելու քիմիական զենք օվկիանոսների և ծովերի ընդերքում և հատակում:

Արդեն 1993թ.-ի կոնվենցիայով արգելվեց քիմիական զենքի ոչ միայն կիրառումը, այլ նաև՝ մշակումը, արտադրությունը, կուտակումը, և դրույթներ ամրագրվեց դրանց ոչնչացման վերաբերյալ: Երբևէ չպետք է մշակել, արտադրել, ձեռք բերել, հավաքել և կուտակել, ուղղակի կամ անուղղակի կերպով որևիցե մեկին հանձնել քիմիական զենք: Չի կարելի կիրառել քիմիական զենք, չպետք է անցկացվի ռազմական զորավարժություններ քիմիական զենքերի օգտագործմամբ: Օգնությունը, դրդելը կամ աջակցելը ցանկացած ձևով որևէ մեկին այնպիսի գործողությամբ, որը իրականացված կլինի քիմիական զենքերի միջոցով, դատապարտվում է: Այն երկները, որոնք իրենց երկրի տարածքում ունեն իրենց սեփականությունը հանդիսացող, տվյալ պետության իրավական կարգավորմանը ենթարկվող ցանկացած տիպի քիմիական զենք,

---

[2] Պայմանագիր «Ծովերի կամ օվկիանոսների հատակին և դրանց ընդերքում ատոմային կամ այլ տեսակի զանգվածային ոչնչացման զենքերի տեղադրում», 11 փետրվարի, 1971 թ., նախաբան:
[3] Նույն տեղում, 1-ին հոդ.
[4] Նույն տեղում, 3-րդ հոդ.

պետք է ոչնչացնեն դրանք: Պետությունները պետք է անդրադառնան իրենց սեփականությունը հանդիսացող քիմիական զենքերին և պետք է հանձն առնեն ոչնչացնելու այն քիմիական զենքերը, որոնք այս կամ այն կերպ գտնվում են իրենց պետության տարածքում, անկախ այն հանգամանքից, որ դրանք տվյալ պետության իրավական կարգավորմանը չեն ենթարկվում: Քիմիական զենքի ոչնչացումը վերաբերում է նաև այն ցանկացած օբյեկտներին, որոնք արտադրվել են քիմիական զենքից, որոնք գտնվում են իր իրավասության ներքո, կամ գտնվում են իր պետության տարածաշրջանում, իր վերահսկողության, ենթակայության ներքո: Արգելվում է կիրառել քիմիական զենքը անկարգությունների դեմ որպես ռազմական ընդհարումների միջոց[5]: Որպեսզի ավելի հստակեցնենք, թե քիմիական զենքի ոչնչացում ասելիս ինչ զենքեր ի նկատի ունենք, ասենք որ միջազգային իրավունքում այս հարցը ևս կարգավորված է: Քիմիական զենք ասելով՝ ի նկատի ունենք.

ա. տոկսինային քիմիկատները և դրանց պրեկուրսորները

բ. զինամթերքը և հարմարանքը՝ նախատեսված հատուկ մահ պատճառելու կամ այլ վնաս պատճառելու իր տոկսինային հատկությունների շնորհիվ

գ. ցանկացած սարքավորում՝ հատուկ նախատեսված քիմիական զինամթերքի օգտագործման համար[6]:

Ներկայումս, որպես քիմիական զենքի թունավոր նյութեր, օգտագործվում են զարին, զոման, V-գազեր, իպրիտ, թթու, ֆոսգեն, լիզերգինովյան թթվի դիմետիլամիդ:

Տոկսինային քիմիկատի սահմանումը նույնպես տրվել է կոնվենցիայով. այն ցանկացած քիմիկատները, որոնց շնորհիվ կենսական պրոցեսի վրա քիմիական ազդեցությունը կարող է առաջացնել լետալ բնույթ, մարդկաց ու կենդանիների ժամանակավոր վնասակարություն կամ մշտական վնաս: Այս շարքին դասվում են բոլոր քիմիկատները, անկախ դրանց ծագումից, արտադրության եղանակից, և անկախ այն բանից, թե դրանք արտադրվել են որևէ օբյեկտում, ռազմամթերքում կամ այլուր:

Իսկ ինչ է նշանակում պրեկուրսոր. պրեկուրսորը քիմիական ցանկացած ռեակտիվ է, որն ինչ-որ ձևով մասնակցում է տոկսինային քիմիկատների արտադրության ցանկացած փուլում: Սրանց վերաբերում են ցանկացած բինարյան կամ բազմակոմպոնենտ քիմիական սիստեմ, սրանք գլխավոր դեր են կատարում ապրանքի տոկսինային հատկությունները որոշելու համար:

---

[5] Կոնվենցիա, «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը», 13 հունվար, 1993 թ., Փարիզ, 1-ին հոդ.

[6] Նույն տեղում, 2-րդ հոդ.

Այն երկրները, որոնք ունեն քիմիական զենք, պետք է ՄԱԿ-ին ներկայացնեն հայտարարություն, որտեղ պետք է ցույց տան, թե արդյոք նրանք ունեն սեփական կամ իրենց տրամադրության տակ որևէ քիմիական զենք, որը գտնվում է իրենց երկրի իրավական տարածքում կամ էլ իրենց վերահսկողության տակ: Եթե որևէ երկիր ներկայացնում է քիմիական զենքի գոյության մասին որևէ տվյալ, ապա պետք է ցույց տա դրա ճիշտ տեղը, ընդհանուր քանակը և մանրամասն նկարագրություն քիմիական զենքի բաղադրիչների մասին: Խոսքը ոչ միայն տվյալ երկրի սեփականություն հանդիսացող քիմիական զենքի մասին է, այլ նաև նրա, որը գտնվում է իր երկրի իրավական տարածքում կամ իր վերահսկողության տակ, բայց պատկանում է ուրիշներին: Եթե որևէ պետություն ուղիղ կամ անուղղակի կերպով ստացել կամ հանձնել է քիմիական զենք դրա մասին հայտարարություն է անում և ցույց է տալիս ստացված քիմիական զենքը: Նախևառաջ պետությունները իրենք մշակում են քիմիական զենքի, որը գտնվում է իր երկրի իրավական տարածքում, ոչնչացման պլան: Սրանից զերծ չի մնում հին քիմիական զենքը կամ էլ անխնամ թողած քիմիական զենքը: Սրանց վնասակարությունը երբեմն ավելին կարող է լինել, հատկապես շրջակա միջավայրի վրա: Եթե պետությունները ունեն հին քիմիական զենք, պետք է հայտարարեն դրանց տեղի, քանակի մասին, նշեն բաղադրիչները, կամ եթե իրենց երկրի իրավական տարածքում ունեն ուրիշներին պատկանող հին քիմիական զենք, ապա պետք է անպայման հայտարարեն: Այն օբյեկտները, որոնցով արտադրվում է քիմիական զենք, պայթարելու կամ անկարգության դեմ կիրառվող քիմիական միջոցների մասին նույնպես հսկողություն է սահմանված: Եթե կան նման միջոցներ, ապա պետք է ցույց տրվի դրանց ճշգրիտ տեղը, դրանց ընդհանուր բնութագիրը, քիմիական զենքի անվանումը: Քիմիական զենքի ոչնչացման մասին իրավական ակտերը հավասարապես վերաբերում են բոլոր տեսակի քիմիական զենքերին: Ի՞նչ նապատակ ունի միջազգային մակարդակով հայտարարություն անել: Այն բոլոր քիմիական զենքերը, որոնք պահվում են, կամ ոչնչացվում են և որոնց մասին արվել է հայտարարություն, անպայման պետք է ենթարկվեն սիստեմատիկ ստուգման հենց տեղում, հատուկ սարքերի միջոցով: Ոչ ուշ քան 2 տարի հետո պետությունները պարտավորվում են վերացնելու քիմիական զենքը: Ամեն տարի ներկայացնում են պլան, որտեղ ցույց են տալիս կատարվելիք աշխատանքները: Հետո քիմիական զենքը վերացնելուց հետո հավաստիացնում է քիմիական զենքի վերացման մասին հայտարարությամբ: Քիմիական զենքերի ոչնչացման գործընթացներից խստիվ տուժում է շրջակա միջավայրը, դրա համար պետությունները պետք է գործեն այնպես, որ հնարավորինս զերծ պահեն մարդկանց ու շրջակա միջավայրը քիմիական ախտոտումից: Այս

բոլորը ուղիղ կապված են մեծ դրամական ռեսուրսների հետ: Քիմիական զենքը ոչնչացնելու պարտականությունը դրված է այն պետության վրա, որը տիրապետում է զենքին, զենքի վերացման համար ծախսերը ևս պետք է կատարի այդ պետությունը: Եթե որևէ երկիր զբաղվում էր քիմիական զենքի արտադրությամբ մինչև 1993թ., ապա 1993թ.-ից հետո այդ պետությունը իրավունք չունի նորացնելու քիմիական զենքի արտադրության օբյեկտները և պետք է դադարեցնի իր գործունեությունը քիմիական զենքի արտադրության ոլորտում, փակի արտադրության օբյեկտը կամ օբյեկտները, քիմիական զենքի ոչնչացման հետ վերացնում է նաև արտադրության օբյեկտները: Ի սպառ ոչնչացում ասելով՝ ի նկատի ունեն այնպիսի վերացում, որ այդ օբյեկտները կամ քիմիական զենքը այլևս հնարավոր չլինի կիրառել: Վերահսկողությունը, որը սահմանված է ՄԱԿ-ի կողմից ուղղված է ոչ միայն այն նպատակին, որ հնարավոր լինի ամբողջական տեղեկություն ունենալ գոյություն ունեցող քիմիական զենքի վերաբերյալ, այլ նաև հետևելու, որ որևէ կերպով չկրկնօրինակվեր քիմիական զենքը: Մենք անընդհատ մատնանշում ենք այն, որ քիմիական զենքը պետք է ի սպառ վերացնել, այն հանդիսանում է զանգվածային ոչնչացման մեթոդ: Այնուամենայնիվ քիմիայի գոյությունը նպատակ չունի միայն չարիք պատճառելու, այն նաև օգտագործվում է հանուն մարդկության բարորության, և բացի այդ այն գիտություն է, որը անընդհատ զարգանում է: Ինչպես սահմանվում է միջազգային նորմով «Բոլոր պետությունները իրավունք ունեն մշակել, արտադրել, այլ կերպ ձեռք բերել, պահել, հանձնել և օգտագործել տոկսինային քիմիկատներ և դրանց պրեկուրսորներ կոնվենցիայով չարգելված նպատակներով»[7]: Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի արտադրելու քիմիկատներ իր ազգային ստանդարտներին համապատասխան, ապահովելով մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունը միայն բժշկական, դեղագործական, գիտահետազոտական, խաղաղ նպատակներով մեկ կառույցի շրջանակներում ոչ ավելի քան 10կգ տարեկան, իսկ 100կգ տարեկան մեկ կառույցի շրջանակներից դուրս:

Պետությունը ինքը պետք է պայմաններ ստեղծի ապահովելու տոկսինային քիմիկատների արտադրության, մշակման, ձեռք բերման, պահպանման կամ էլ օգտագործման համար: Կարևորություն է հանդիսանում այն փաստը, որ այս քիմիկատները ևս պետք է ենթակվեն հսկողության նույն պայմաններով, որոնք, վերաբերում են վերը նշված քիմիական զենքին: Առաջին հերթին անհրաժեշտ է թվարկել բոլոր այն քիմիկատները, որոնք արտադրվում, մշակ-

---

[7] Կոնվենցիա «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը», 13 հունվար, 1993թ., Փարիզ, հոդ. 6-րդ, 1-ին կետ

վում, ձեռք են բերվում, կուտակվում և կիրառվում են, թվարկել դրանք իրենց համապատասխան քիմիական անուններով, իրենց ազդող հատկություններով, վնասակարության աստիճանով, անվտանգության սահմանած կանոններով: Սրանց մասին հայտարարությունն անելը նույնպես պարտադիր է: Հսկողությունն իր հերթին պետք է իրականացվի այնպես, որ հնարավորինս խուսափեն պետությունների տնտեսական, տեխնիկական զարգացմանը կամ նրա արտադրությանը խոչընդոտելուց: Եթե նշում ենք, որ պետությանը արգելվում է կիրառել քիմիական զենք ապա դա պետք է անպայմանորեն տարածել նաև այլ սուբյեկտների վրա ևս: Բոլոր սուբյեկտները, որոնք գտնվում են որտեղ էլ որ լինեն այդ պետության տարածքում կամ նրա իրավական կարգավորմանը ենթարկվող տարածքում արգելվում է մշակել, արտադրել, կուտակել, պահպանել, կիրառել քիմիական զենք: Դրույթը խախտելու համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: Հենց այս դրույթներն էլ ամրագրված են 1993թ., Փարիզի Կոնվենցիայում[8]: Կարևոր է նաև այն, որ պետությունները վերը նշված նպատակների համար հիմնում են նոր մարմին՝ Ազգային մարմին, որի հիմնական գործունեությունն ուղղված կլինի քիմիական զենքի վերաբերյալ սահմանված միջազգային նորմերի իրականացմանը, այն պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կլինի կապող օղակ և յուրաքանչյուր Ազգային մարմին կներկայացնի իր պետությունը՝ ելնելով միջազգային իրավունքի սկզբունքներից: Վերը նշել ենք, որ յուրաքանչյուր պետություն ինքն է իր ծախսերը հոգում, որպեսզի ոչնչացնի քիմիական զենքն ու զինամթերքը: Բայց ասենք, որ 1993թ. «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը» կոնվենցիայով որոշվեց ստեղծել մի միջազգային կազմակերպություն, որի խնդիրը կլիներ միջազգային մակարդակով հետևել քիմիական զենքի իսպառ ոչնչացմանը[9]: 1997թ. Հաագայում հիմնվեց Կազմակերպություն քիմիական զենքերի արգելման համար (OPCW): Քիմիական զենքերի արգելման համար կազմակերպությունը ստեղծվել է ամբողջ աշխարհում քիմիական զենքի վերացման նպատակով: ԿՔՋԱ-ի հիմնական խնդիրն է հսկել գոյություն ունեցող քիմիական զենքերի ոչնչացմանը և միջոցներ ձեռք առնելու, որոնք ուղղված կլինեն այն բանին, որ քիմիական զենք այլևս չարտադրվի: ԿՔՋԱ-ն ցույց է տալիս օգնություն և պաշտպանություն իր անդամ պետություններին, եթե կա քիմիական զենքի կիրառման սպառնալիքը կամ էլ հարձակումը քիմիական զենքի միջո-

---

[8] Կոնվենցիա «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը», 13 հունվար, 1993 թ., Փարիզ, 7-րդ հոդ.

[9] Կոնվենցիա «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը», 13 հունվար, 1993 թ., Փարիզ, 7-րդ հոդ., կետ 7

ցով: ԿՔՁԱ-ն նաև ընդարձակում է միջազգային համագործակցությունը քիմիայի խաղաղ զարգացման ոլորտում: Այս կազմակերպությունը ունի բարեգործական միջոցներից հավաքված ֆոնդ և կարիքի դեպքում օժանդակում է պետություններին՝ իրականացնելու քիմիական զենքի հետ կապված նպատակները: Պետությունները կարող են համագործակցել միմյանց հետ ինչպես անմիջապես, այնպես էլ ԿՔՁԱ-ի միջոցով: Ասենք նաև, որ պետությունների վրա հսկողությունն իրականացվում է հենց այս կազմակերպության կողմից: Կարևոր ենք համարում նշել, որ հսկողություն նախաձեռնվում է ոչ միայն պարտադիր կերպով, այլ նաև որևէ պետության խնդրանքով: Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի խնդրելու իրականացնել հսկողություն իր իրավական կարգավորմանը կամ հսկողությանը պատկանող տարածքի կամ այլ տեղանքի, որը գտնվում է մասնակից պետության իրավական կարգավորման ոլորտում յուրաքանչյուր օբյեկտի հարցմամբ ցանկացած հարցեր հստակեցնելու և կարգավորելու համար, որը վերաբերում է կոնվենցիայի հնարավոր չհետևելուն, ինչպես նաև պահանջելու հսկողությունն իրականացնել խմբով[10]: Յուրաքանչյուր պետություն կարող է խնդրել ոչ միայն իրականացնելու հսկողություն, այլ կարող է օժանդակություն և օգնություն խնդրել ԿՔՁԱ-ին: Օգնություն նշանակում է պետությանը ցույց տալ պաշտպանություն քիմիական զենքից, որը ներառում է պաշտպանական սարքավորանք, բժշկական հակաթունաբերիչներ և դրանց բուժման եղանակները, խորհրդակցությունները քիմիական զենքի հետ կապված ցանկացած հարցով և այլն: Քիմիական զենքի արգելման մասին նորմերը հստակեցնում են, որ արգելվում է այն քիմիական զենքը, որը մշակվել է, արտադրվել է, կուտակվել է կամ կիրառվել է այնպիսի պայմաններով, որ իր բարձր թունավորության աստիճանով իրենից ներկայացնում է այնպիսի վտանգ, որ կարող է պատճառել մահ կամ այլ անհետևանք ազդեցություն և որ ունի հենց զենքի նպատակ: Ի՞նչ է նշանակում քիմիական զենքի ոչնչացում: Սա մի պրոցես է, որի իրականացման դեպքում հնարավոր չէ վերականգնել քիմիակտների նախկին հատկությունները, որը անպետք է դառնում քիմիական զենքի արտադրության համար, սա էլ իր հերթին անհնարին է դարձնում, որ դրանք կիրառվեն որպես զինամթերք կամ նմանատիպ միջոցներ: Ոչնչացումը կատարվում է քիմիական զենքի համար նախատեսված հատուկ սարքերի ֆիզիկական ոչնչացմամբ, բոլոր կառույցները, որտեղ արտադրվում է, պահվում, մշակվում է քիմիական զենք ֆիզիկապես ոչնչացվում են:

---

[10] Կոնվենցիա «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, օգտագործման արգելումը և դրանց ոչնչացումը», 13 հունվար, 1993 թ., Փարիզ. 9-րդ հոդ.., կետ 8